ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

16 ապրիլի, 2024 թ.

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը գումարվեց 2024 թվականի ապրիլի 16-ին՝ ժամը 17:00-ին, ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական շենքում: Նիստը վարում էր Հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը:

ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահ	Լիլիթ Թադևոսյանը
Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի անդամ	Հայկ Գրիգորյանը
Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ	Խաչատուր Պողոսյանը
Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ	Աննա Վարդապետյանը
Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան	Անահիտ Մանասյանը
Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար	Գրիգոր Մինասյանը
Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ	Սիմոն Բաբայանը

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Ռուստամ Բաքոյանը

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի» նախագահ Արթուր Սաքունցը

Նիստն արձանագրում էր ՀՀ վարչապետի աշխատակազմի արձանագրային բաժնի ավագ մասնագետ Անուշ Մանուկյանը:

Ա. Դիլանյանը Հանձնաժողովի հաստատմանը ներկայացրեց նիստի օրակարգային հարցը:

Հանձնաժողովը միաձայն հավանություն տվեց նիստի օրակարգին:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Օրակարգային հարց՝ հավակնորդների բանավոր հարցազրույցների արդյունքում Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից տրված գնահատականների վերջնական ամփոփում:

Հանձնաժողովի նախագահը կազմակերպեց գնահատման ենթակա յուրաքանչյուր չափանիշով հարցազրույցի յուրաքանչյուր մասնակցի միասնական միավորների հաշվարկումը և միասնական գնահատման թերթիկի կազմումը՝ համաձայն N 3 հավելվածում սահմանված նմուշի: Այնուհետև Հանձնաժողովի նախագահն ստորագրեց գնահատման միասնական թերթիկը և ներկայացրեց հավակնորդների վերջնական գնահատականները:

Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. Վարչապետի հաստատմանը ներկայացնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրության փաստաթղթային ստուգման և հարցազրույցի

փուլերն անցած և առավել բարձր միավորներ հավաքած հավակնորդների ցուցակը՝ հետևյալ կազմով՝

1) Գրիգորյան Վահե
2) Կարապետյան Նորա
3) Քոչարյան Վիգեն

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐ՝

Նիստը վարող՝ **Արման Դիլանյան**	**[ստորագրված]**
Լիլիթ Թադևոսյան	**[ստորագրված]**
Հայկ Գրիգորյան	**[ստորագրված]**
Խաչատուր Պողոսյան	**[ստորագրված]**
Աննա Վարդապետյան	**[ստորագրված]**
Անահիտ Մանասյան	**[ստորագրված]**
Գրիգոր Մինասյան	**[ստորագրված]**
Սիմոն Բաբայան	**[ստորագրված]**
Ռուստամ Բաքոյան	**[ստորագրված]**
Արթուր Սաքունց	**[ստորագրված]**
Արձանագրող՝ Անուշ Մանուկյան	**[ստորագրված]**